

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՀՈՐԻ ԳՐՔԻ ԼՈՒԾՄՈՒՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՐՈՍ ԲԵՐԴՈՒՄՅԱՆԻ ՆՈՒՅՆԱՆՈՒՆ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԷԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Միջնադարյան մեծանուն մանկավարժ, աստվածաբան, փիլիսոփա Գրիգոր Տաթևացին իր բազում մեկնությունների հետ մեզ որպես ժառանգություն թողել է նաև Աստվածաշնչի Հորի գրքի լուծմունքը: Անգնահատելի են նրա դերը և թողած վաստակը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետության ճշմարիտ դավանության ջատագովման, պահպանման և փոխանցման գործում: Եթե անգամ նա մեզ որպես ժառանգություն թողած լիներ հանրագիտարանային «Գիրք Հարցմանց»-ը¹, ապա կրկին մեծ պիտի լինեին նրա դիրքն ու դերը մեր եկեղեցու և ընդհանրապես հայագիտության մեջ: Գրիգոր Տաթևացու մտքի, մանկավարժական փորձի ազդեցությունների կրողն են եղել առաջին հերթին նրա աշակերտներից Առաքել Սյունեցին, Մատթեոս Ջուղայեցին, որոնք հետևող եղան իրենց ուսուցչի մտքի ընթացքին, ինչն իրենց արտահայտությունը գտավ նրանց երկերում:

ԺԴԺԵ դարերում Հայաստանը ծանր կացության մեջ էր թե՛ քաղաքական, թե՛ մշակութային առումներով: Այն վայրերում, որտեղ աշխարհագրական դիրքն ու տեղական մանր նախարարական իշխանությունները կարողանում էին պահպանել երկիրը թշնամու տևական հարձակումներից, այդ վայրերում մշակութային օջախներն ու դպրոցներն առավել երկար կյանք էին ունենում: Նմանատիպ կրթական օջախներ էին նաև Տաթևի և Մեծոփա վանքերի դպրոցները: Գրիգոր Տաթևացին, լինելով Հովհան Որոտնեցու արժանի հետևորդն ու տաթևյան դպրոցի ավանդների կրողը, իր մեծ վաստակն ունի նաև Մեծոփա վանքի դպրոցի պատմության մեջ, որտեղ էլ գրել է Հորի գրքի լուծմունքը²: Մեզ է հասել լուծմունքի ինքնագիր օրինակը (ՄՄ, ձեռ. 1115): Լուծմունքում երբեմն-երբեմն հանդիպում ենք որոշակի հարցերի լուրջ քննարկման և վերլուծության, իսկ որոշ հարցերի էլ նա անդրադառնում է բավական հակիրճ, երբեմն էլ բավարարվում է՝ նշելով. «Եւ գտցես զայս ի

¹ Գրիգոր Տաթևացու Գիրք Հարցմանցի ինքնագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, ձեռ. 3616:

² Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 1115, թ. 123բ (այսուհետ՝ ՄՄ):

Հարցմանց յերրորդ հատորն, ԺԹ համարին»³, կամ «Ի Քարոզն տե՛ս»⁴ և այլն: Մեծ փափագով է կազմել իր լուծմունքը, որն ի վերջո Մեծոփա վանքում իրագործել է և դասավանդել դպրոցի աշակերտությանը, որոնք մեծ ուշադրությամբ ունկնդրել են իրենց ուսուցչին⁵. «...որ ի վաղուց հետե՛լ փափագեի բոլոր Մեկնութեանս Յորայ»⁶: Այստեղ հարկ չենք համարում համակողմանի քննարկել Հորի լուծմունքը, այլ նպատակ ունենք միայն անդրադառնալու Տաթևացու լուծմունքի թողած ազդեցությանը Պետրոս արք. Աղամայան-Բերդումյան Նախիջևանցու նույնանուն երկի վրա:

Պետրոս արք. Աղամայան-Բերդումյանի կյանքի և գործունեության, մատենագրական վաստակի մասին բավական սուղ տեղեկություններ են հասել մեզ, որոնք մեր մատենագրության մեջ փորձել են ամբողջացնել տարբեր հեղինակներ: ԺԸ դարի մեծավաստակ այս հայ եկեղեցականի գրչին պատկանող երկերի զգալի մասը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում⁷: Նրա ապրած պատմական ժամանակաշրջանի մասին է նշում Լեոն. «Յաուրս Սիմէօնի, Աթոռն Էջմիածնի թէեւ ընդ իշխանութեամբ բարբարոսացն Պարսից՝ այլ կայր ըստ մարթելոյ ժամանակին ի բարեկարգութեան, եւ ոչ սակաւ ծաղկէին ի նմա արք իմաստունք եւ արդիւնատուք, յորս անուանիք են՝ Սահակ եպիսկոպոս Ահագին, Մինաս եպիսկոպոս Կոյր, Պետրոս եպիսկոպոս Աղամալեան կամ Փերթումեան՝ մատենագիր բազմահմուտ եւ այլք»⁸:

Պետրոս արք. Բերդումյան նշանավոր եկեղեցական գործչի՝ մեզ ի ժառանգություն թողած հսկայածավալ մատենագրական վաստակի մաս է կազմում Հորի մեկնությունը, որի ինքնագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (ծեռ. 1174), և, ինչպես հայտնի է դառնում հիշատա-

³ ՄՄ, ձեռ. 1115, թ. 10բ:

⁴ Նույն տեղում, թ. 12ա:

⁵ Տե՛ս ՄՄ, ձեռ. 1203, թ. 14բ-ի մանրանկարը, որը գրվել և ծաղկվել է 1449թ.: Դատելով մանրանկարից՝ կարող ենք ասել, որ միջնադարում ևս կիրառվել են դասն անցկացնելու այլընտրանքային մեթոդներ, որոնք կիրառվել են և՛ անտիկ շրջանում, և՛, ինչպես գիտենք, կիրառելի են նաև այսօր: Ձեռագիրը ժողովածու է, որտեղ մեծ մասամբ տեղ են գտել Գրիգոր Տաթևացու լուծմունք-մեկնությունները: Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, Մաշտոցի անվան Մատենադարան, հտ. Դ, կազմեցին՝ Ա. Քեօշկերեան, Կ. Սուրիասեան, Յ. Քեօսէեան, Երեւան, 2008, էջ 623-628:

⁶ ՄՄ, ձեռ. 1115, թ. 123բ:

⁷ Մատենադարանում ավելի քան 160, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանում՝ 47, Վիեննայում՝ 9 ձեռագրեր:

⁸ Լեոն, Հայոց պատմություն, հտ. Գ, Երևան, 1973, էջ 463:

կարանից, հեղինակն այն ավարտին է հասցրել 1776 թ.։ Գրվածքն ընթերցելիս կարող ես նկատել, թե որքան մանրագնին քննարկմամբ է լուծել իր առջև դրված խնդիրը, և, անշուշտ, նաև եզրակացնել, թե որքան խորությամբ է նա մոտեցել հարցերին, համակողմանի և ամբողջական ներկայացրել մեկնությունը։ Ամենայն մանրամասնությամբ է մեկնել աստվածաշնչյան այս գիրքը։ Ձեռագիրը բաժանումներ չունի, սակայն ընթերցելով մեկնությունը՝ նկատելի է, որ գրվածքը Աստվածաշնչի Հոբի գրքի գլխաբաժանումներն ունի, քանզի բոլոր գլուխներն ընդգրկված են։ Բերդումյանն անդրադարձ է կատարել գրեթե բոլոր համարներին՝ բաց թողնելով միայն իրար նման տողերը՝ կրկնաբանություններից խուսափելու համար։ Հսկայածավալ այս երկը համեմված է աստվածաշնչյան մեջբերումներով և նորկտակարանյան տեքստի հետ զուգահեռներով՝ համեմատական գծեր անցկացնելով Հոբի և Հիսուս Քրիստոսի միջև, օրինակ. «Դարձեալ՝ սրբութեամբ և կատարելութեամբ, զի որպէս ի խորհուրդս Քրիստոսի ոչ գտաւ թիւրութիւն և ոչ բերանն՝ նենգութիւն, այսպէս և ոչ ի սմա, ուստի բերանով մարգարէին Քրիստոս ինքեան նմանեցուցանէ զՅօբ, յասելն. «Ի գլուխս գրոց գրեալ է վասն իմ» (Սաղմ. ԼԹ 8)»¹⁰։

Պետրոս Բերդումյանը Տաթևացու նման Հոբին համարում է Եսայի սերնդից, և նրա երկիրը՝ Օսիդը, որը Եդոմ երկրի գավառներից է. «Օսիտ, որ թարգմանի խորհուրդ, է գաւառ յերկրին Եդոմայ, յանապատին Փառանու, ուստի էր մեծ նահապետն Յօբ»¹¹։ Այս հարցում կարծես տարակարծություն չկա Տաթևացու և Բերդումյանի միջև. «Այլ աշխարհն Օսիդ՝ գաւառ է Եսաւայ, զի Օսիդն մի է յորդոցն Եսաւայ, յորոյ անուն կոչեցաւ երկիրն Օսիդ։ Եւ է ի մէջ Արաբիոյ և Եդոմայ»¹²։ Սակայն տարբեր են Հոբ անվան բացատրությունները.

Տաթևացի Կոչեցաւ Յօբ, որ է հայր, զի հայր եղև համբերութեան ¹³ ։	Բերդումյան Յօբ թարգմանի ցաւող և նշանակ էր զապագայ ցաւն։ (6ա) ¹⁴
--	--

⁹ ՄՄ, ձեռ. 1174, թ. 89բ։

¹⁰ ՄՄ, ձեռ. 1174, թ. 6ա։

¹¹ Նույն տեղում։

¹² Գիրք Հարցմանց երիցս երանեալ սրբոյ իօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն (այսուհետ՝ Գիրք Հարցմանց), Երուսաղէմ, 1993, էջ 327։

¹³ Գիրք Հարցմանց, էջ 320։

Հետաքրքիր է այն փաստը, որ թե՛ Տաթևացին և թե՛ Բերդույանը «Հոբ» անունը կապում են «Հոբաբ» անվան հետ: Բերդույանը Հոբ ԽԲ գլխի 17 համարի մեկնության մեջ մեջքերում է Ծննդոց գրքի հետևյալ գրվածքը. «և մեռա Բաղակ և թագաւորեաց Յօբաբ՝ որդի Զարեհի» (ԼՁ 33)¹⁵: Իսկ Տաթևացին հղում չի անում Ծննդոց գրքին, այլ ուղղակի կազմում է «ծննդաբանությունը». «Այսպէս. Աբրահամ, Իսահակ, Եսաւ, Ռազուէլ, Զարեհ, Յոբ»¹⁶: Կարելի է եզրակացնել, որ խոսքը նույն մարդու մասին է, քանզի երկուսի բերած վկայություններն էլ ծննդաբանությամբ հանգում են միևնույն մարդու ապրած ժամանակաշրջանին: Եվ այս ծննդաբանությունից ուղղակիորեն կարելի է եզրակացնել, որ Հոբն ապրել է նահապետական շրջանում: Այս կարծիքի հաստատման համար փաստարկները բավականին լուրջ են, այստեղ կնշենք մի քանիսը: Նախ այն, որ Հոբի գրքում որևէ հիշատակություն չկա Մովսիսական Օրենքի մասին, երկրորդ՝ Հոբը զոհ մատուցեց իր զավակների մեղքերի համար, ինչն անում էին նահապետական շրջանում, դրանից հետո մաքրագործման զոհ կարող էին մատուցել միայն ղևտացի քահանաները, երրորդ՝ Հոբն ապրեց մոտավորապես 240 տարի, որը մոտ էր նահապետական շրջանում ապրողների տարիքին և այլն:

Տաթևացի Եւ նախ կոչիւր Յոբաբ, որ է «սիրելի Աստուծոյ» և կոչեցաւ Յոբ... ¹⁷	Բերդույան ...և թագաւորեաց Յօբաբ՝ որդի Զարեհի (Ծննդ. ԼՁ 33), խօսի զՅօբայ, որ Յոբաբ ևս կոչիւր: (6ա)
---	--

Միևնույն մտքի մեկնության մեջ կան և՛ նմանություններ, և՛ տարբերություններ. Բերդույանն առավել պարզ և հստակ բացատրություն ունի, իր գրեթե բոլոր խոսքերը հիմնավորելու համար նա բերում է աստվածաշնչյան համարներ, իսկ Տաթևացին առավել երկարաշունչ բացատրություններ է տալիս, նա անդրադառնում է նաև գրքի նախորդող համարներին, որոնք նախորդ համարների մեկնության մեջ բացակայում էին, դա անում է տվյալ համարի

¹⁴ Համեմատական տախտակների՝ Պետրոս Բերդույանի՝ Հոբի մեկնության երկից մեջքերումները կատարվում են ՄՄ, 1174 ինքնագրից, որի թվահամարն այսուհետ չի նշվելու:

¹⁵ ՄՄ, ձեռ. 1174, թ. 89բ:

¹⁶ Գիրք Հարցմանց, էջ 320:

¹⁷ Նույն տեղում:

հետ կապ ստեղծելու նպատակով (օրինակ՝ Հոբ Ե 19 համարի մեկնությունը): Հետաքրքիր են նաև նրանց երկուսի՝ միևնույն հարցերի մասին տարբեր մոտեցումները.

Տաթևացի Վեցից վշտաց փրկեսցէ զքեզ և եօթներորդումն ոչ մերձեսցի առ քեզ չար: ...Նախ՝ զի <i>եօթն հասակ</i> (ընդգծումը մերն է -Ս. Է.) է ամենայն մարդոյ, որ է՝ տղա, մանուկ, պատանեակ, երիտասարդ, հասակ, ալևոր, ծեր...Եւ յիւրաքանչիւր հասակի վիշտ և մեղանչում գոյմեզ, յորժամ ի վեց հասակէն փրկէ զմեզ, ի <i>յեօթներորդումն ոչ հասանի առ մեզ չար</i> (ընդգծումը մերն է -Ս.Է.): (22ա)	Բերդումյան Նախ՝ վեցն կատարեալ թիւ գոլով նշանակէ զբովանդակ կեանք մարդոյն, որ նպատակ գոլով փորձութեան..., երկրորդ՝ <i>վեց են հասակ</i> (տարբերություն, ընդգծումը մերն է -Ս. Է.) մարդոյ, նախ՝ յղութենէն մինչև ցծնունդ, ...երկրորդ՝ մանկութիւնն, ...երրորդ՝ պատանեկութիւնն, ...չորրորդ՝ երիտասարդութիւնն, ...հինգերորդ՝ ծերութիւնն, ...վեցերորդ՝ զանաւորութիւն, ...իսկ <i>եօթներորդն է ապահովութիւն արքայութեան, յորում ոչ մերձենայ ումեք չար</i> (նմանություն, ընդգծումը մերն է -Ս.Է.): (14բ)
---	---

Տաթևացին իրեն բնորոշ ոճով, նաև գործածած ժանրի՝ լուծմունքի բնույթից ելնելով, բացատրություններում հնարավորինս հակիրճ է մեկնում բառը, բառակապակցությունը կամ նախադասությունը, որոնք կարելի է որակել նաև որպես ուղղակի նշումներ, որ բանավոր խոսքում առավել հարստացրել է բացատրել է իր ունկնդրին: Եվ թվում է, թե նրա ժամանակաշրջանի ունկնդիրը ծանոթ է եղել մեկնություններին, որի համար էլ նա ուղղակի իր խոսքը կարճել է, այսինքն՝ ենթադրվում է, որ անգամ իր սեղմ գրածը կարդացողը պիտի հասկանար, մինչդեռ նման օրինակներում Բերդումյանն արդեն ԺԸ դարում շատ պարզ և հասկանալի է բացատրում.

Տաթևացի Բն. Հոտ առիծոյ: Լծ. Ամենայն շաղկակեր գազանի բերան հոտեալ է: Այլեւ ասեն, թէ ի գլուխն առիծու հոտ կայ և իջանէ ի բերան նորա:	Բերդումյան Քանզի շարաւ խոցուածոյ բերանոյս, որք իբրև գկերակուր և զըմպելի հոսեն գնան դէպ ի ստամոքսս, նա ի ներքուստ ոչ ընդունելով, դարձու-
---	--

(32բ)	ցանէ ան//դրէն, որով ստիպիմ բանալ զբերանս և արտաքսել՝ չժուժկալելով չար հ/ո/տոյն:... Առիժն և այլ գագանք ունելով գատամունս իւրեանց բաց և տարակաց ի միմեանց և ոչ խիտ իբրև զմարդոյ, զշաղղացն, զոր ուտեն, մնան կտորք ի միջոցս ատամանց և նեխին, և այնու զչար հոտս արձակեն: (15բ-16ա)
Տաթևացի Տեսէք, զի անցաւորք են գանձք, և ոյք հուսան ի մեծութիւն: (32բ)	Բերդումյան Միտք բանին է, թէ զայս ասելով ոչ յուսահատիմ և ոչ զարմանամ ընդ տնանկութիւնս իմ, զի այս է թէութիւն անցաւորաց, զի ոչ միայն արք թագաւորք և մասնաւոր անձինք անկան և տնանկացան, այլև գաւառք գլխովին և քաղաքք: (16բ)

Դատելով բերված օրինակներից և ոչ մեջբերվող բազում ուղղակի և անուղղակի նմանություններից՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ Բերդումյանն իր մեկնությունը գրել է առավել լայն հասարակության համար, քան Գրիգոր Տաթևացին: Անգամ կարելի է ենթադրել, որ Տաթևացու երկի շատ պարբերությունների համար մի տեսակ «բանալի» է Բերդումյանի երկը՝ Տաթևացուն հասկանալու համար: Բերդումյանի ոճն առավել պարզ է, հստակ, չի թաքցնում բառի իմաստը, այլ ընթերցողին հասկանալի լինելու համար համակողմանի բացատրում է, խոսքը հիմնավորում հինկտակարանյան և նորկտակարանյան մեջբերումներով: Վերջինս առավել ընդգծված է, քանզի փորձել է խորհրդաբանորեն Հորի հետ կատարվածը կապել Քրիստոսի երկրային կյանքի դրվագների հետ:

Ե՛վ Տաթևացին, և՛ Բերդումյանն իրենց երկերում օգտագործել են մեկնողական՝ բառացի և այլաբանական մեթոդները: Բերդումյանն իր երկում նաև նշում է *նկարագրական* եզրը, որը համարժեք է *բառացի* եզրին, ինչպես օրինակ՝ *Ըստ նկարագրին խոնաութիւն անուղղակի պատճառի յարեգա-*

կանէ... Այլաբանօրէն արեգակն կոչէ զԱստուած¹⁸: Երբեմն էլ որպէս մեկնողական եղանակ օգտագործում է *բարոյականապէս*¹⁹ բառը, որն անհատին ու հասարակությանը վերաբերող բարոյախրատական հորդոր է՝ միտված քրիստոնեական վարքութեան, ճիշտ կենցաղավարություն սովորեցնելուն:

Ի տարբերություն Տաթևացու, որն իր լուծմունքում հերթականությամբ չի անդրադարձել Աստվածաշնչի Հոբի գրքի բոլոր համարներին, Բերդումյանը ճշգրիտ և համակարգված մոտեցում է ցուցաբերում իր մեկնության մեջ՝ հետևելով Աստվածաշնչի Հոբի գրքի համարների հերթականությանը: Շատ հաճախ Տաթևացին ընդհատում է աստվածաշնչյան համարների մեկնությունը և երկարաշունչ ճառերով պատմում դավանաբանական որևէ հարցի մասին՝ վերնագրելով այն (օրինակ՝ *Վասն դաստաստանի Աստուծոյ*²⁰ կամ *Խորհուրդ տնօրինութեան*²¹): Բերդումյանը, ընդհակառակը, իր մեկնողական խոսքերը չի ընդհատում՝ հերթականությունը չխախտելու համար, ուղղակի կարողանում է հընթացս խոսել այդ հարցերի շուրջ:

Ինչպես Տաթևացին, Բերդումյանը ևս սիրում է մեկնվող համարներում բերել փիլիսոփայական բացատրություններ, շատ հաճախ նա շեշտում է, թե որ փիլիսոփայից է անում մեջբերումը: Երկում մեջբերվում են Պլատոնի²², Արիստոտելի²³, Դավիթ Անհաղթի²⁴, Թալեսի²⁵, Պլուտարքոսի²⁶ խոսքերից:

Այսպիսով, անկարելի է չնկատել այն մեծ ազդեցությունը, որ Տաթևացին թողել է իրեն հաջորդող սերունդների վրա, ինչը փորձեցինք ցույց տալ Պետրոս Բերդումյան-Աղամալյան պատրիարքի՝ Հոբի գրքի մեկնության օրինակով: Նրա մեջբերումներն անուղղակի կրկնում են նույն միտքը, ավելի պարզ ու մատչելի դարձնում բացատրությունները՝ իր ժամանակաշրջանի ունկնդրին հասու լինելու համար: Երկունս էլ մեկնության մեջ օգտագործում են նույն մեթոդները:

¹⁸ ՄՄ, ձեռ. 1174, թ. 20ա:

¹⁹ Նույն տեղում, թ. 21ա:

²⁰ ՄՄ, ձեռ. 1115, թ. 100բ:

²¹ Նույն տեղում, թ. 116բ:

²² ՄՄ, ձեռ. 1174, թ. 54բ, 55ա:

²³ Նույն տեղում, թ. 25բ, 27բ, 54բ, 80բ:

²⁴ Նույն տեղում, թ. 67աբ, 76ա:

²⁵ Նույն տեղում, թ. 89ա:

²⁶ Նույն տեղում, թ. 57ա:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում անդրադարձել ենք ԺԴ-ԺԵ դարերի մեծավաստակ եկեղեցական, մատենագիր, աստվածաբան, փիլիսոփա Գրիգոր Տաթևացու Հորի գրքի լուծմունքին, նրա թողած ազդեցությանը հետագա դարերի վրա, հատկապես քննության է առնվել ԺԸ դարի եկեղեցական Պետրոս արք. Բերդումյան-Աղամալյան Նախիջևանցու նույնանուն երկի վրա, որի ինքնագիրը հասել է մեզ (ՄՄ, ձեռ. 1174): Օրինակներով ցույց է տրվել Բերդումյանի՝ Տաթևացուց կրած ազդեցություններին, որոնք նա մեջբերել է անուղղակի կամ երբեմն նաև մտքի այլ շարադրման ձևով, վեր են հանվել Բերդումյանի երկի առանձնահատկությունները, ընդգծվել է նրա մտքի ինքնուրույնությունը:

Բանալի բաներ – լուծմունք, մեկնություն, Հորի գիրք, Գրիգոր Տաթևացի, Պետրոս Բերդումյան, մեկնողական մեթոդ, Օսիդ (Հուսա, Ուզ), ձեռագիր:

ВЛИЯНИЕ ТОЛКОВАНИЯ КНИГИ ИОВА ГРИГОРА ТАТЕВАЦИ НА ИДЕНТИЧНУЮ ТРАКТОВКУ ПЕТРОСА БЕРДУМЯНА

ЭЛЯ САРИБЕКЯН

В данной статье мы обратились к анализу книги Иова великого церковника, летописца, богослова, философа, писателя, педагога XIV-XV вв. Григора Татеваци, который оставил большой отпечаток на последующие века, особенно сосредоточились на обсуждении идентичного произведения церковника XVIII в. Петроса арх. Бердумяна-Агамаляна Нахиджеванци, автограф которого дошел до нас (ММ, рук. 1174). По примерам мы рассматривали то влияние Татеваци, которое цитирует Бердумян, по иным изложениям мысли выявляли особенности произведения Бердумяна и подчеркнули индивидуальность его мысли.

Ключевые слова – толкование, книга Иова, Григор Татеваци, Петрос Бердумян, метод толкования, Уц, рукопись.

THE INFLUENCE OF 'INTERPRETATION OF THE BOOK OF JOB' BY GRIGOR
TATEVATSI ON PETROS BERDUMYAN'S 'COMMENTARY
ON THE BOOK OF JOB'

ELYA SARIBEKYAN

This article is devoted to the study of 'Interpretation of the Book of Job' by Grigor Tatevatsi, a 14th-15th century Armenian theologian, philosopher and scribe. The influence of this work on Armenian literature in subsequent centuries is considerable, and to show this Saribekyan compares and draws parallels between 'Interpretation of the Book of Job' by Grigor Tatevatsi and a work bearing the similar title, 'Commentary on the Book of Job' (the 1174th manuscript in Matenadaran), by bishop Petros Berdumyan, an 18th century Armenian author.

Saribekyan demonstrates Tatevatsi's influence on Berdumyan's work via examples. However, the author of the article, referring to the analysis and thesis presented in Berdumyan's 'Commentary on the Book of Job', and comparing them with those of Tatevatsi's, thinks that they are simpler, more comprehensible and that they underline the uniqueness of Berdumyan's thoughts.

Key words - solution, commentary, book of Job, Grigor Tatevatsi, Petros Berdumyan, method the commentary, manuscript.